ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 7 -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի ԹԻՎ 17-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2026 թվականի հունվարի 20-ի թիվ 4-Լ հրամանը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 17-Լ հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Դադարեցնել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչություն» հավելվածների գործողությունը.

2) Լրացնել նոր՝ «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի

նախարարության փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչություն» պաշտոնների անձնագրերը՝ համաձայն հավելվածների:

2. Հրամանը ծանոթացնել ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

26.01.2026

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ